

խտացած էր գրաքննութիւնը որ սկսաւ խեթի նայիլ գլխաւորաբար մեր ազգային երգերուն և անոնց հաւաքածոներուն . ատոնց հրատարակիչներէն Յ. Գալաֆեան և Ե. Տնտեսեան կը հետապնդուին . առաջինը կը փախչի Արքնք , իսկ եղիա ձերբակալուելով՝ եղեռնագործէ մը աւելի ծանր ամբաստանութեան տակ կը բանտուի 1881 ի սկիզբները : Իր անյոյս գնդանին մահասփիռ ու նողկալի մքոնորոտին մէջ հազիւ 3 ամիս կրնայ ողջ մնալ , և 23 Ապրիլին կը կրնքէ իր արդիւնաւետ կեանքը : — Պալքքլի հողմբոսիքը , դարաւոր լատենիներուն տակ՝ ո՞ր է սակայն տապանը բուրք բռնապետական Գրաքննութեան այս անդրանիկ նահատակին որ ոգի ի բոլին ծառայած էր հայ գրականութեան , հայ երաժշտութեան , հայ տպագրութեան և հայ ազգասիրութեան . . . : — Բանտարկութեանը միջոցին և բռնամահէն վերջն ալ կաղն ի կաղ կը գործէր դարձեալ իր տպարանը՝ կառավարական խտուրիներով : — Գ. Պաղտատղեան անոր Մամուլը կը գնէ վերջէն , զոր՝ իր կարգին կը ծախէ Եօանեաբուի , ձեռամբ Պ. Ատրունիի որ այդ Ռումանաճալուն գրագիրն էր : — Իսկ Տնտեսեանի ԵՐԳԱՐԱՆները գաղտագողի վառած են իր ազգականները , « քարը խափանած ըլլալու » քաղաքականութեամբ . . . : — Եղիայի գաւազն է Լեւոն որ Ղալափա՝ իր մօրեղորօր «Ռօման և Ընկ.» մեծ բրդալվաճառատան պետն է : — Ե. Տնտեսեան տպարանէն լոյս ընծայուած են . — Գրոց-Բրոց , Հնոց-Նորոց , Քնն. Կրօնագիտութիւն (1874) , Ո՞վ է մեղաւոր , Շուշանն Շաւարշանայ (1875) , Սանդուխտ կոյս , Հրակիրակ Արարատեան , Մանանայ , Իմպեռ. Կարուա , Խաչի ճառ. (1876) , Թէ ի՞նչ շահեցանք Պէրլինի Վեհաժողովէն (1878) , Թորոս Ալլար (1879) , Ազգային ջոշեր (1880) , Մասնաւորաբան ժողովրդեան (1882) եւ այլն :



118. **Քեշիշեանը** ♦ — Պալք Այի , համանուն տպարանին հիմնադիրն է ԿԱՐԱՊԵՏ , բնիկ Թալաացի որ 60 տարեկան մեռած է Բերա՝ 29 Գեկտ. 1910 ին : Ընդհ. Օսմ. զին. և քրք. վարժարաններու վաղեմի գրավաճառ. որ 35 տարիէ հետէ նուիրուած տպագր. գործին՝ հրատարակած է անհամար աման բրք. դասագիրքեր ևն. և հանդեսներ , (Քսիմիլի Կագեբա , Մեքքեպ , Բ. Ջրա՛սք Կագեբասը , Եւնի Կագեբա) : Չիքակոյի ցուցահանդեսէն ստացած է ոսկի միտայ , ձարոնի Միքատոյէն՝ Ծագող Արեւական պատուանշանը , Սերպիոյ բագաւորէն՝ Բագովայի Ա. աստիճան , Օսմ. կառավարութենէն՝ Մեճիտիկ և Օսմանիկ , նաեւ արձնասոց շքադրամ : Ունէր Ուլայի աստիճան և պատուոյ անդամ էր Նիւ Եօրքի բարեգործ. ընկ.եան : — Ատեն մը գործակցած է Գասպար Պ. Գայսեբեանի : Տաճկ. գիրքերով ու բերքերով հրապարակը ողողող այս անձը տպած է հայերէն 2 պարբերական , Ղ. Բոյասի «Հանրագիտակ»ն ու Ա. Անտոնեանի «Լոյսը» , (վերջնոյն շարուածքը «Մանգումե»ի կողմէ) : — Իր մահէն վերջ՝ զաւակները սկսած են շարունակել նոյն գործը Կ. Քի՛ՇԻՇԵԱՆ ՈՐԳԻՒՒՄ անուամբ , և 15 Մայիս 1912 էն սկսեալ տպագրած՝ **Վ.Երածնունդ** պարբերաբերքը (Սահմ. Ռամկ. ուսանող. Միութեան) :



119-121. **Տպարան Հայաստանեայց** ♦ — Նախապէս ՀՄԱՅՆԱԿ Ե. ԳԻՄԱՔՍԵԱՆԻ՝ Եւնի Գարու , «պօսբան»ի մէջ գտնուող տանը մէջ էր այս տպարանը , հիմնուած 1875 ին , Գիմաքսեանի կողմէ : — Ինք ծնած է 1839 ին Եւնի Գարու , ուր ստացած է նիւն. կրթութիւնը : 1857 ին Երուսաղեմ անցնելով կ'աշակերտի ժառանգաւորացի : 69 ին վարդապետ կը ձեռնադրուի , 1880 ին ալ եպիսկոպոս՝ Գեորգ Գ. է : — Նոյն գործատան մէջ տպուած է **Լոյս** հանդէսը : Առ. այս , քաջալեր հանդիսացած է իրեն՝ Ներսէս Պատրիարք : Մինչեւ Երիզայի իր առաջնորդ ընտրուիլը , 10 տարի շարունակած է նոյն բերքը : Տպարանը կար բազմամասնու մը՝ Միհենտիսեանէ գնուած : Հոն հրատարակուած է նաեւ Գիմաքսեանի «Շիքք մանուկը Միչերկրականի»ն , «Գայլ Վահան»ը , Աղօթագիրքեր , Շարական , Տօնակարգ ևն. : Նաեւ Գանձարան խրատուց , Նախակրք. քերականութիւն աշխարհիկ լեզուի (1876) : — Գիմաքսեան Ս. երկար առե՛նէ ի վեր քարոզիչն է Բերայի Ս. Երրորդութեան Եկեղեցիին : Անդամակցած Կրօն. և այլ ժողովներու : \* \* Գիմաքսեանի յաջորդած է ԿԱՐԱՊԵՏ Ա. ՊԱՐՈՆԵԱՆ որ Պատ-